

ՔԱՂՎԱԾՔ

2004թ. մարտի 29-ին կայացած էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ տարեկան ընդհանուր ժողովի նիստի արձանագրությունից

Ներկա էին՝

1. Նիք Գիլմորը՝ էյչ-էս-Բի-Սի Յուրրփ Բի Վի Ընկերության անունից
2. Արա Ալեքսանյանը՝ Ուինգս Իսթբլիշմենթի անունից:

Ներկա էին ձայնի իրավունք տվող 100% բաժնետոմսերի սեփականատերերի ներկայացուցիչները:

Ժողովը որոշեց՝

1. Հաստատել 2003թ. տարեկան շահաբաժինների վճարման կարգը:
2003թ.-ի համար պետք է վճարվի մինչև 1.800.000.000 ՀՀ դրամ տարեկան շահաբաժին, որից՝

600.000.000 ՀՀ դրամը՝ 2004թ. մարտին.
600.000.000 ՀՀ դրամը՝ 2004թ. հուլիսին.
600.000.000 ՀՀ դրամը՝ 2004թ. հոկտեմբերին:

Սահմանվել է, որ այդ վճարումները չեն հանգեցնի Բանկի ընդհանուր կապիտալի նվազմանը ԱՄՆ 7.500.000 դոլարին համարժեք ՀՀ դրամից՝ հաշվարկված ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան, և/կամ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվների խախտմանը:



Մ.Հարությունյան, Ընկերության Քարտուղար

30 հունիսի 2006թ
ամսաթիվ

